

## ԱԳՆԵՍԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի, Եվրոպական և  
միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ

# ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՍԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Կիլիկիայի հայկական պետությունը, ձևավորվելով ժամանակաշրջանի միջազգային կյանքի կենտրոններից մեկը հանդիսացող տարածաշրջանում, ակտիվորեն մասնակցում էր միջազգային գործընթացներին: Առանձնահատուկ աշխարհագրական դիրքի շնորհիվ, գտնվելով երեք աշխարհամասերի՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի խաչմերուկում, Կիլիկիայի հայկական թագավորությունը նշանակալի դերակատարում ուներ Արևելքի և Արևմուտքի երկրների միջև ծավալված ուղղագրագրական, առևտրա-տնտեսական և մշակութային փոխհարաբերություններում: Միաժամանակ, կարևոր ուղղագրատեղիական նշանակություն ունենալով Առաջավոր Ասիայում, Կիլիկիան հայտնվեց միջազգային քաղաքական իրադարձությունների կենտրոնում:

11-րդ դարից սկսած՝ Բյուզանդիան, Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, Արևմտյան Եվրոպայից Արևելք ներթափանցած խաչակիրները պայքարում էին Մերձավոր Արևելքում հաստավելու համար: Ուստի, Կիլիկիայի հայկական պետության կազմավորումը տեղի էր ունենում լարված միջազգային քաղաքական մթնոլորտում, հակադրվող շահերի բախնան պայմաններում:

Արդեն 13-րդ դարի 50-ականներին տարածաշրջանում ուժերի հարաբերակցության փոփոխության հետևանքով Կիլիկիայի հայկական թագավորությունը կանգնեց նոր միջազգային քաղաքական իրավիճակի առջև: Մերձավոր Արևելքում ասպարեզ էին եկել երկու հզոր տերություններ՝ մոնղոլական իլխանությունը և Եգիպտոսի մամլության սուլթանությունը: Մոնղոլները, նպատակ ունենալով գրավել Սիրիայի և Պաղեստինի ռազմական և առևտրական խոշոր նշանակության նախահանգիստները, ընդհարվեցին Եգիպտոսի մամլության սուլթանության հետ: Կիլիկյան պետությու-

նը մամլությունների դեմ մոնղոլների պայքարում դարձավ իլխանության վստահելի հենարանը, ինչը սկիզբ դրեց նաև հայ-Եգիպտական երկարատև հակամարտությանը: Միաժամանակ, Եգիպտոսի կողմից 1268թ. Անտիոքի դքսության կործանումից հետո Եվրոպայի համար ավելի մեծացավ Կիլիկիայի ուղղագրագրական և տնտեսական նշանակությունը: Պապական դիվանագիտությունը նոր խաչակրաց արշավանքների ծրագրեր էր մշակում՝ այդ գործում մատնանշելով Կիլիկյան պետության կարևորությունը: Կիլիկիայի թագավորներն իրենց հերթին, հատկապես Հերոս II-ի կառավարման շրջանից սկսած, եռանդուն ջանքեր էին գործադրում Արևմուտքի հետ ուղղագրագրական սերտ համագործակցություն հաստատելու համար:

Հատկանշական է, որ, ի սկզբանե, Կիլիկիայի հայկական թագավորությունն առնչվում էր ոչ միայն քաղաքական շահերի տեսանկյունից հակարգվող երկրների, այլ նաև ոչ միատիպ միջազգային-իրավական համակարգի պատկանող պետությունների հետ:

Ինչպես էին աշխարհում, միջնադարում ևս չկար միջազգային հարաբերությունների կարգավորման մեջ ընդհանուր համակարգ: Քննվող ժամանակահատվածում գոյություն ունեին միջազգային կյանքի տարրեր կենտրոններ՝ միջպետական հարաբերությունների և միջազգային շփոմների կարգավորման ոչ միատեսակ մոտեցմամբ: Արևմտյան և Արևելյան Եվրոպայում միջազգային իրավական նորմերի զարգացումը տեղի էր ունենում հոռմեական իրավունքի ազդեցությամբ: Միջնադարյան Եվրոպայում միջազգային իրավական նորմերի վրա մեծ էր նաև կարուիկ եկեղեցու ազդեցությունը, որը դրսնորվում էր կանոնական իրավունքի միջոցով, մինչդեռ արաբական աշխարհում միջազգային իրավական պրակտիկան զարգանում

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Եր իալամի զգալի ազդեցությամբ: Շարիաթն այն կարևորագույն աղբյուրն էր, որից բխում էին ինչպես արաբական երկրների միջև, այնպես էլ արաբական պետությունների՝ ոչ արաբական աշխարհի հետ հարաբերությունների կարգավորման հիմնական սկզբունքները: Այդուհանդերձ, արդեն միջնադարում միջազետական հարաբերությունների կարգավորման որոշակի փորձ կուտակվել էր, որն իր արտացոլումն էր գտել ժամանակաշրջանի միջազգային իրավական ինստիտուտներում: Այստեղ պետք է առանձնացնել պայմանագրային իրավունքը, որը հենվում էր միջազգային սովորության նորմերի վրա: Պրակտիկան մշակել էր պայմանագրերի որոշակի տեսակներ՝ հաշտության, դաշնակցային, բարեկամության, փոխօգնության, առևտրի, սահմանների, արբիտրաժի, չեղորդության և այլն:

Կիլիկիայի հայկական պետության պայմանագրային պրակտիկան ևս ծևավորվեց միջնադարյան սովորության նորմերի վրա և անմիջականորեն պայմանավորվեց ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների առանձնահատկություններով:

Կիլիկիան պետության պայմանագրային պրակտիկան սկսվում է դեռ Կիլիկիայի հայկական իշխանության գոյության ժամանակաշրջանից: Հայտնի են Ռուբինյան իշխանների՝ մասնավորապես Անտիոքի դքսության և Բյուզանդական կայսրության հետ կմքած հաշտության և դաշնակցային պայմանագրերը:

Կիլիկիայի հայկական թագավորության՝ մեզ հայտնի միջազետական պայմանագրերը ներկայանում են որպես երկկողմ քաղաքական պայմանագրեր, որոնք կնքվել են Իկոնիայի սելջուկյան սուլթանության, Մոնղոլական կայսրության, Եգիպտոսի մամլության սուլթանության հետ:

Կիլիկիան թագավորության միջազետական պայմանագրերի կնքումը սկսվում էր կողմերից մեկի՝ պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ, որին հաջորդում էր թանակցային գործընթացը: Պայմանագրերի տեքստերը թանակցվում էին թագավորի կողմից լիազորված ներկայացուցիչների միջոցով, երբեմն նաև անձամբ թագավորի կողմից (օրինակ՝ 1254թ. հայ-մոնղոլական դաշնակցային պայմանագիրը կնքելիս թանակացությունները տարվել են անձամբ Հեթում Ի-ի կողմից): Բանակցային գործընթացի արդյունքում կազմվում էր պայմանագրի տեքստը, իսկ նախապես համաձայնեցված տեքստի վերջնական հաստատումը կա-

տարվում էր թագավորի կողմից:

Միջնադարյան միջազետական պայմանագրերի ուժի մեջ մտնելն առհասարակ պահանջում էր մասնակիցների կողմից պայմանագրի վավերացում: Կիլիկիան պետությունում միջազետական պայմանագրերի վավերացումը պարտադիր էր համարվում: Պայմանագրերը վավերացնում էր թագավորը: Վավերացումը ենթադրում էր միապետի պաշտոնական հավանությունը պայմանագրին, որից հետո միայն պայմանագրիը պարտադիր էր համարվում: Պայմանագրի վավերացումը կատարվում էր թագավորի կողմից հանդիսավոր կերպով տրված կրոնական երդման միջոցով, որին ներկա էին գտնվում նաև պայմանագրի մյուս կողմի պատվիրակները:

Անդրադանալով Կիլիկիայի հայկական պետության միջազետական պայմանագրերի կառուցվածքին՝ պետք է նշել, որ այդ կապակցությամբ մեզ որոշակի պատկերացում է տալիս 1285թ. հայ-եղիպտական հաշտության պայմանագիրը: Պայմանագիրը բերված է արաբ պատմագիր Թաղի-Էդ-Ղին Ահմեդ Մաքրիզիի՝ Եգիպտոսի մամլությունների պատմությանը նվիրված աշխատության մեջ և, ամենայն հավանականությամբ, գրված է բնօրինակից: Այն Կիլիկիայի հայկական թագավորության՝ այլ երկրների հետ կնքած պայմանագրերից միակն է, որը մեզ է հասել ոչ միայն բովանդակային, այլ նաև կառուցվածքային պարունակությամբ: Պայմանագիրը կազմված է ժամանակաշրջանի պայմանագրերի տեքստային կառուցվածքին համապատասխան, որոնք հիմնականում եռամաս էին՝ կազմված նախարարանից, հիմնական մասից և եղրափակիչ մասից:

Պայմանագրի նախարար թագավականին ընդարձակ է, որտեղ մեծ տեղ է հատկացվում կրոնական երդմնագրին: 1285թ. հայ-եղիպտական պայմանագրի նախարարանում կարդում ենք. «Ես Լուս, որդի Հեթումի, որդի Կոստանդինի. Աստոծով, Աստոծով, Աստոծով», «Վասն Աստոծո...» (3 անգամ), «հանուն Աստոծ» (3 անգամ) «ճշմարիտ Սեսիայով» (3 անգամ), «ճշմարիտ խաչով» (3 անգամ), «ճշմարիտ Ավետարանով» (3 անգամ), «ճշմարիտ Հորով, Որդով և Ս. Հոգով», «ճշմարիտ երեք անձերով և մեկ աստվածությամբ», «ճշմարիտ 4 ավետարաններով», «ճշմարիտ 12 աշակերտներով և 318 եկեղեցու պաշտպան եպիսկոպոսներով», Սրբուհի Մարիամով, ս. Հովհաննես Մկրտչով, ս. Թովմասով, ս. Մարկոսով, ճշմարիտ մեծ պահերով, «ճշմարիտ քրիստոնեությունով, որ իմ կրոնն ու

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հավատն է», այն մկրտությունով, որ «ընդունել եմ քահանաներից և հայրերից», «այն բոլոր ճշմարիտ հայրերով, որ մերձ են առ Աստված: Այս թվականից, այս ժամից սկսած կխոստանամ դնել մի անկեղծ եռանդ, մի ուղիղ նպատակ՝ ի հնազանդություն և ի կատարումն իմ պարտքերի առ մեր տերն Սուլթանն Սելիք-Էլ-Մանսուր...»: Կուխտեմ պահպանել դաշնագրիս բոլոր պայմանները, որոնք պիտի մանրամասնվեն այս երդման տակ»<sup>1</sup>:

Նախարանում մանրամասնվում է նաև պայմանագրի ժամկետը. «Այս զինադադարը պետք է տևի տասը տարի ամբողջ և հաջորդական անընդհատ, և տասն ամիս, և տասն օր և տասը ժամ»<sup>2</sup>:

Պայմանագրի նախարանը պարունակում է նաև պատժամիջոցներ պայմանագրի խախտելու համար. «Պիտի հարգեմ այս զինադադարը մինչև ցվախճան պայմանաժամին և նրա պայմանները պիտի կատարեմ մի առ մի, կխոստանամ նրանց հետեւ հավատարմաբար, ինչպես և բոլոր պարունակությանը. Երբեք նրա դեմ չափուի գործեմ ոչ գործով, ոչ նշանով, ոչ ակնարկությամբ. չափուի վիճակը ոչ մեկ առիթ այն բեկանելու կամ նրա որևէ մասս զնշելու: Այս դաշնագրի վերաբերյալ, նրա բաղկացուցիչ կետերի և նրա սահմանած պայմաններից որևէ մեկի նասին ուրիշի հետ չափուի խորհրդակցեն: Եթե այս պայմանը ամբողջովին կամ մասամբ դրժեմ, եթե նրա մասին մեկի հետ խորհրդակցեն և եթե վերապահումներ ամեն նրա ամբողջության կամ նրա այս կամ այն նախատեսումների մասին, ինչ որ ունեմ շնչավոր էակ կամ նյուրական առարկա, պետք է բաշխվի իբրև ողորմություն քրիստոնյաների մեջ գտնվող աղքատներին ու չքավորներին, և ես հանձ կառնեմ երեսուն անգամ ուխտագնացություն կատարելու դեպի Երուսաղեմ հետիոտն, գլխարաց և բոկոտն: Հանձն կառնեմ պահք պահել ամբողջ կենացս մեջ, եթե չկատարեմ այս զինադադարի պայմանները կամ նրանցից մի քանիսը և կամ եթե կատարեմ մի գործ, որ այս պայմանի և նրա հոդվածներից որևէ մեկի ճշտիվ կատարման հակառակ լինի: Եվ այս քանը պիտի շարունակվի զինադադարի սկզբից մինչև այն պայմանաժամը, որ այս երդմանագրի մեջ որոշված է»<sup>3</sup>:

Սուլթան Քալատունը ևս պարտավորվել էր հարգել պայմանագրը, սակայն մեզ չի հասել սուլթանի երդմանագրի բովանդակությունը: Նշենք միայն, որ 1283թ. Եզիպտոսի և Ակրայի միջև կնքված պայմանագրով սուլթան Քալատունը հանձն էր առել 30 ուխտագնացություն կատարել դեպի Մերքա

պայմանագիրը խախտելու դեպքում<sup>4</sup>:

Պայմանագրի հիմնական մասը գրված է մեկ ընդհանուր տեքստով: Տարբեր պարտավորություններ հետևում են մեկը մյուսին՝ առանց դրանք հոդվածների բաժանելու:

Եզրափակիչ մասն իրենից ներկայացնում է պայմանագրին հավատարիմ մնալու երդմնագիր: Այն է՝ «Հանուն Աստծոն և ի սեր հավատիս, կրոնիս և դպանությանս, խոստանում են հավատարմութեան հարգել այս զինադադարի պայմանները: Եվ այս երդումն՝ իմ երդումն է, Լևոնի, Հեթումի որդու: Եվ այս մասին իմ դիտավորությունները նույնն են, ինչ որ Սուլթանինը, նրա որդիներինը, ինչպես և նրանց անունով իմ երդումը ընդունող անձի դիտավորությունները: Չունեմ երբեք ուրիշ նպատակ, ուրիշ դիտավորություն, քան այն, ինչ իրենք ունեն: Աստված թող վկա լինի այս ամենին: Ամենաբարձրյալն երաշխավոր է խոսքերիս ճշմարտության: Թող Մեսիհան ևս լինի վկա՝ ինձ դեմ բողոքելու պատրաստ»<sup>5</sup>:

Փաստորեն երդումը պայմանագրերի կատարման կարևոր երաշխիքային միջոց էր, սակայն տրված խոսքին հավատարիմ մնալը հիմնվում էր միայն բարոյա-կրոնական նորմերի վրա և հաճախ էր խախտվում: Գոյություն ունենին պայմանագրերի ի կատար ածնան նաև այլ երաշխիքներ, ինչպես պատանեների փոխանակումը, արժեքավոր իրերի և տարածքների գրավադրումը, երրորդ պետությունների կողմից երաշխավորությունը, ամուսնական կապերի հաստատումը պայմանագրը կնքող կողմերի իշխող վերնախավի անդամների միջև և այլն: Այսպես՝ 1194թ. Լևոն II-ի և Անտիոքի դուքս Բոհեմոնի III-ի միջև կնքված պայմանագրը ամրապնդվեց Բոհեմոնի որդի Ռայմոնդի և Լևոն II-ի եղբոր աղջիկ Ալիսի ամուսնությամբ:

Պայմանագրերի երաշխավորման գործում նշանակալի դերակատարում ուներ Հռոմի պապը: Կանոնական իրավունքը հենվում էր Եկեղեցական այն դրույթի վրա, որ տրված խոստումից հրաժարումը համարժեք է ստի և, հետևաբար, մեղք է: Եկեղեցու կարգապահական գործառույթներից էր հետևողական լինելը տրված խոստումների, այդ թվում՝ պայմանագրային պարտավորությունների կատարմանը<sup>6</sup>: Պապերը քննում էին պայմանագրերի խախտման բողոքները և հավակնում այսպես կոչված դիսպենսացիայի իրավունքին՝ պայմանագրը կնքելիս տրված երդումից ազատելու իրավունքին<sup>7</sup>:

Հետաքրքրական է, որ 1338թ. Հռոմի պապ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Բենեֆիկտոս XII-ը Լևոն V-ին ուղղված նամակով ազատեց նրան 1337թ. Եզիպտոսի սուլթան Սելիք-Նախիքի հետ կնքած պայմանագրի համար տրված երդումից՝ պատճառաբանելով, որ այն տրվել է ոչ կամավոր կերպով<sup>8</sup>: Այդպիսով, Կիլիկիայի համար պայմանագիրը չեղյալ համարվեց: Բենեֆիկտոս XII-ի միջամտությունը այս հարցին պայմանագրով վերաբերում էր այն հանգամանքով, որ Լևոն V-ը անձամբ ընդունում էր Հռոմի պապի բարձր հեղինակությունը, նրա կրոնական քաղաքականությունն ուղղված էր հայ և կաթոլիկ եկեղեցիների ունիային, մինչդեռ պայմանագրով կիլիկյան քաղաքորոր պարտավորվել էր այլևս դիմումներ և պատվիրակություններ չուղարկել պապին:

Այդուհանդերձ Հռոմի պապի որոշումները տարածվում էին միայն կաթոլիկ աշխարհում և նրա ազդեցության ոլորտում գտնվող երկրներում, մինչդեռ պայմանագիրը կնքվել էր քրիստոնեություն և մահմեդականություն դավանող երկրների միջև: Եզիպտոսի համար պայմանագիրը շարունակում էր ուժի մեջ մնալ, և, հետևաբար, վերջինիս կողմից Կիլիկիան դիտարկվում էր իրեն պայմանագիրը խախտող կողմ:

Վերոնշյալը, սակայն, Կիլիկյան պետության պայմանագրային պրակտիկայում մշտապես կիրառելի չէր: Կիլիկիայի՝ այլ պետությունների հետ պայմանագրային հարաբերությունները կարգավորվում էին անմիջականորեն պայմանագիրը կնքած կողմերի միջև: Եթե պայմանագիրն անգամ կնքվել էր հարկադրանքի ճանապարհով, ոչ իրավահավասար հիմքերով, այն չէր կարող չեղյալ հայտարարվել: Արդեն կնքված պայմանագիրը պարտադիր էր կողմերի համար: Այսպես՝ Լևոն II-ը 1194թ., գերեվարելով Անտիոքի իշխան Բոհեմոն III-ին, նրա հետ կնքեց իր շահերից բխող համաձայնագիր, որով լուծվեցին Կիլիկիայի հայկական իշխանության և Անտիոքի դքսության միջև գոյություն ունեցող տարածքային խնդիրները հօգուտ Կիլիկիայի:

1268թ. Հերում I-ը Եզիպտոսի սուլթան Բեյքարսի կողմից գերված քագաժառանգ Լևոնին ազատ արձակելու դիմաց պայմանագիր կնքեց սուլթանի հետ՝ վերջինիս առաջարկած պայմաններով: Այս առքիվ արաք պատմագիր Արու-լ-Ֆիդայի «Ժամանակագրության» մեջ կարդում ենք. «...հաշտություն կայացավ ալ-Մայք ալ-Ղահիրի (սուլթան Բեյքարս) և Սահ տիրոջ՝ Հերումի միջև այն իհման վրա, որ եթե Սահ տերը քարարների մոտից բերի Սոնկուր ալ-Աշկարին, որոնք նրան գերի

էին վերցրել Հալերի բերդից այն ժամանակ, երբ Հուլաղոն տիրել էր այդ տեղին, և քացի այդ՝ հանձնի Բեյեսնին, Դարպասակը, Մարզբանը, Դարանը, Շիհել Հաղիողը, ապա սուլթանն էլ ազատ կարձակի նրա որդի Լևոնին: Ապա Սահ տերը ներկայացավ Արաղային, քարարներին և նրանցից խնդրեց Սոնկուր ալ-Աշկարին: Նա էլ հանձնեց նրան և Սոնկուր ալ-Աշկարը վերադարձավ ալ-Մայք ալ-Ղահիրի ծառայությանը և Դարպասակը, ինչպես և մյուս վայրերը, որոնք հիշեցինք, հանձնվեցին, քացի Բեյեսնիից: Ալ-Մայք ալ-Ղահիրն էլ ազատ արձակեց Սահ տեր Հերումի որդուն՝ Լևոնին, ու վերադարձրեց իր հորը»:

Ժամանակաշրջանի միջակետական պայմանագրային հարաբերությունների կարևոր առանձնահատկություններից էր այն, որ այդ հարաբերություններում վճռորոշ դերակատարում ուներ քաղաքական շահի գործոնը: Պայմանագրերի բարեխիղճ կատարման բարոյա-կրոնական նորմերը պարբերաբար անտեսվում էին, իսկ պայմանագրերի պահպանումը հաճախ անմիջականորեն պայմանավորված էր քաղաքական դրդապատճառով: Սա տեսանելի է նաև Կիլիկյան հայկական պետության պայմանագրային պրակտիկայում: Օրինակ՝ Կիլիկիայի հայկական քաղավորության և Եզիպտոսի մամլության սուլթանության միջև 1268թ., 1285թ., 1293թ., 1323թ., 1337թ. պայմանագրերը կնքվել են Կիլիկիայի դեմ Եզիպտուական արշավանքների արդյունքում՝ որպես հաշտության պայմանագրեր, հիմնականում Եզիպտոսի ռազմական գործողությունները կանխելու կամ դադարեցնելու նպատակով: Քանի որ Կիլիկիան իր արտաքին քաղաքականությունը վարելիս Եզիպտոսը դիտարկում էր իրեն հակառակորդ պետություն, ուստի վերջինիս հետ կնքվող պայմանագրերը սովորաբար խախտվում էին մինչև դրանց ժամկետի ավարտը:

Հայտնի է նաև, որ քաղաքական նկատառումներով Հերում I-ը խախտում է միջազգային սփյուռքային նորմերից հյուրընկալության սովորությունը: Հայ-մոնղոլական առաջին պայմանագրի 1243թ. (1244թ.) կնքման նպատակով Հերում I-ը ընդունում է մոնղոլ զորավար Բաչու Նոյինի նախապայմանը և նրան հանձնում Կիլիկիայում ապաստանած Իկոնիայի սուլթանի ընտանիքի անդամներին: Այն, որ Կիլիկյան պետությունն ընդունում և հետևում էր այս սովորույթին, վկայում է Հերում I-ի արձագանքը մոնղոլ զորավարի պահանջին՝ «լավ էր իմ որդի Լևոնին խնդրելին, քան նրանց»<sup>10</sup>: Միջ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նադարյան հայ պատմիչների վկայությամբ Հեթումը իր կամքին հակառակ Կիլիկյայի դեմ մոնղոլական հարձակման սպառնալիքի տակ միայն համաձայնեց հանձնել սուլթանի հարազատներին<sup>11</sup>: Միաժամանակ Հեթումյանները խախտում են նաև 1220թ. Իկոնիայի սեղուկյան սուլթանության հետ կնքած հաշտության պայմանագիրը՝ իրաժարվելով սուլթան Քեյ-Խոսրովին տրամադրել պայմանագրով նախատեսված զինվորական օժանդակ ուժեր մոնղոլների դեմ ռազմական գործողություններ իրականացնելու համար:

Փաստորեն Կիլիկիան պետությունների հետ հարաբերություններում առաջնորդվում էր ժամանակաշրջանի միջազգային սովորությային նորմերով, սակայն այդ նորմերը պահպանվում էին այնքան ժամանակ, քանի դեռ չէին սպառնում պետության արմատական շահերին:

Պետությունները դեռ հնուց ելնում էին այն սկզբունքից, որ եթե կողմերից մեկը խախտում է պայմանագիրը, մյուս կողմը կարող է միակողմանիորեն իրաժարվել պայմանագրից: Պայմանագրի խախտումը որպես թշնամական ակտ և կապված էր լուրջ հետևանքների հետ: Ինչպես տեսանք, 1285թ. հայ-Եգիպտական պայմանագիրը պարունակում էր պատժամիջոցներ այն խախտելու համար: Իրականում կրոնական բովանդակությամբ պատժամիջոցներն առավելապես ձևական բնույթ էին կրում: Կիլիկյան պետության կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման դեպքում վերջինիս դեմ, որպես հիմնական պատժամիջոց, կիրառվում էր ռազմական ուժը: Այսպես, Կիլիկիայի հայկական քաղաքության կողմից 1220թ. Իկոնիայի սեղուկյան սուլթանության հետ կնքած պայմանագիրը խախտելու և սուլթանի ընտանիքի անդամների նկատմամբ հյուրընկալության սովորույթը անտեսելու համար սեղուկները պատժիչ գործողությունների դիմեցին՝ ռազմական հարձակումներ իրականացնելով Կիլիկիայի դեմ: Եգիպտոսի մամլության սուլթանությունն ամեն անգամ պատերազմ էր սկսում Կիլիկիայի հայկական քաղաքության դեմ, երբ համարում էր, որ պայմանագրի խախտում է տեղի ունեցել: Արաբական աղբյուրները, հիմնավորելով Եգիպտացիների կողմից վերսկսված արշավանքները (1275-1276թթ.), մեղադրում են Լևոն III-ին 1268թ. պայմանագրի կետերին չհետևելու, այն է՝ պահանջվող տուրքը չվճարելու, ամրոցները վերականգնելու, մամլությունների առևտրական քարավանների վրա կատարվող հարձակումների մեջ<sup>12</sup>:

Եգիպտոսի սուլթանության ռազմական գործողությունները կարող էին պայմանավորված լինել նաև Կիլիկիայի՝ ռազմական օգնություն ստանալու նպատակով Հռոմի պապի և Եվրոպական պետությունների հետ տարվող բանակցություններով, նամանավանդ, որ Արևոտքում Եգիպտոսի դեմ նոր խաչակրաց արշավանքների ծրագրեր էին մշակվում: Ամբողջությամբ չտիրապետելով 1268թ. պայմանագրի բովանդակությանը՝ դժվար է ենթադրել, թե ինչպիսի պարտավորություններ են կողմերը ստանձնել միմյանց նկատմամբ, և թե որքանով էր իիմնավորված Եգիպտոսի կողմից ռազմական ուժին դիմելը: Սակայն, արդեն 1285թ. պայմանագրով նախատեսվում էր. «Սուլթանի տերության, նրա զորքի և հպատակների մասին ամենին որևէ բան չհայտնել իրքն օժանդակություն այն անձանց, որոնք միտք ունեն թշնամություն անելու թե՛ արշավանքով, թե՛ որևէ վնասաբեր եղանակով, չմասնակցել որևէ դավադրության, որը կարող է չար ու վատ հետևանք ունենալ, բարյացակամություն ցույց չտալ Սուլթանի թշնամիներից որևէ մեկին, նրան երբեք չօգնել, չնպաստել, նրա հետ որևէ հաղորդակցություն չունենալ՝ ոչ անուղղակի նշաններով, ոչ նամակով, ոչ դեսպանությամբ և կամ թերանացի պատգամով, այլ իր բանակցություններով ջանալով միայն իր անձն ու տերությունը ապահովության մեջ պահելու: Նա խոստանում է ամեն ճիզ քափել՝ Սուլթանի երկրները բոլոր չարիքներից ապահովելու, ձերբակալելու բոլոր նրանց, ովքեր իր երկրից փախչելով՝ թշնամություն և ավերում պիտի գործեն այնտեղ»<sup>14</sup>:

Կիլիկիայի հայկական պետությունը քաղաքական պայմանագրեր էր կնքում ժամանակաշրջանի հզոր տերությունների հետ: Միաժամանակ պետության հզորության գործոնը մեծ նշանակություն ուներ պայմանագրի խախտողին պատասխանատվության ենթարկելիս, ընդ որում, ռազմականապես ավելի ուժեղ պետության կողմից պայմանագրի խախտումը վերջինիս համար կարող էր հետևանքներ չառաջացնել: Այսպես՝ Կիլիկիայում գտնվող մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Փիլարդուի՝ 1307թ. Կիլիկիայի հայկական պետության դեմ իրականացրած հանցագործությունից հետո, այն է՝ Լևոն IV-ի, Հեթում քաղաքություններ չիրականացվեցին: Փաստացի տեղեկություններ չկան այս միջադեպից հետո Կիլիկիայի պետության կողմից պատժիչ գործողություններ չիրականացվեցին: Փաստացի տեղեկություններ չկան այս միջադեպից հետո Կիլիկիայի հայկական քաղաքության կողմից 1254թ.

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հայ-մոնղոլական դաշնակցային պայմանագիրը խզելու մասին, սակայն տեղեկություններ չկան նաև Կիյիկիայի կողմից իր պարտավորությունների կատարումը շարունակելու, մասնավորպես՝ Եզիպտոսի դեմ Իլիսանության արշավանքներին մասնակցելու մասին:

<sup>1</sup> Տես Սովորիայան Ա. Գ. Կիհիկիալի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 217:

<sup>2</sup> See supra infra.

<sup>3</sup>ՏԵՇԱՆԱԿԱՆ Ա. Գ. էջ 217-218:

<sup>4</sup> Stū Holt P.M. The Treaties of the early Mamluk sultans with the Frankish states, Bulletin of the School of Oriental and African studies University of London, 1980, vol. XLIII, part 1, p. 69.

African studies, University of Lon  
5 S1/ Hnphuuuuu6 II. Oct. 225.

<sup>6</sup> Cf. Will, C. G., The Faculty of International Law, Berlin, 2000, p. 99.

<sup>7</sup> Stu Wilhelm G. Grewe, The Epochs of International Law, Berlin, 1911, Part II, p. 1062, C. 22.

<sup>8</sup> Տե՛ս Ղամշյան Մ. Հայոց պատմություն, հատոր Գ, Երևան, 1984, էջ 337-338, Օրմանյան Մ., Ազգապատում, հատոր

Բ, Մայր Աբոն Ս. Էջմիածին, 2001, սյուն 2167:  
9 Տես Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ.Թ Նալբանդյանը, Երևան,

<sup>11</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 285:

<sup>11</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, նոյն տեղում, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, Ս.Ղազար, 1956 էջ 226-227:

<sup>12</sup> Ст. Талалаев А. Н. Право международных договоров: Общие вопросы, М., 1980, С.19.

<sup>13</sup> Stéphane Angoulès, *The Armenian Kingdom and the Mamluks: war and diplomacy during the reigns of Het'um II, Baibars and Qalawun* (London, 2006).

Brill

РЕЗЮМЕ

# Практика заключения и исполнения межгосударственных договоров Киликийского армянского царства

Статья посвящена исследованию международно-правовых основ межгосударственных отношений Киликийского армянского царства. В данной статье рассматриваются некоторые особенности заключения и выполнения межгосударственных договоров Килийского армянского государства. На конкретных примерах показано в каком порядке заключались договоры между Киликией и другими государствами и какие механизмы обеспечения договорных обязательств существовали.

## SUMMARY

## *The practice of conclusion and execution of international treaties of the Armenian Kingdom of Cilicia*

The article deals with the international legal framework of interstate relations of the Armenian Kingdom of Cilicia. The article discusses some features of the conclusion and implementation of international treaties of the Armenian Kingdom of Cilicia. It reveals the procedure for the conclusion and execution of international treaties of Cilician Armenia and the mechanisms for ensuring treaty obligations.